



SAGAMAR CJSC

Սագամար ՓԲԸ

Մշտադիտարկումների ամփոփ
տարեկան 2024թ-ի հաշվետվություն

Խորհրդատու;

Ծառուրյան Քոնսալթինգ



<https://tsaturyanconsulting.am/>

Mob; (+374) 94 800 877;

E-mail; info@tsaturyanconsulting.am

<<07>> փետրվարի 2025թ.

Սագամար ՓԲԸ

Տնօրեն



Ստանիսլավ Մորոզով

Ծառուրյան Քոնսալթինգ



Արայիկ Ծառուրյան

Բովանդակություն

Նախաբան.....	4
Նախագծային փաստաթղթերը և թույլտվությունները	5
Հանքավայրի շրջանի շրջակա միջավայրի նկարագիրը.....	5
Մթնոլորտային օդ.....	9
Մակերևութային և ստորերկրյա ջրեր	12
Հողային ծածկույթ.....	17
Վայրի բնություն, կարմիր գրքում ընդգրկված, Էնդեմիկ տեսակներ	21
Ֆլորա	21
Ֆաունա	41
Ոչ վտանգավոր թափոններ.....	53
Վառելանյութերի պահեստարաններ.....	58
Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ	58
Աղմուկ և թրթռում.....	58
Ռադիացիոն ֆոն.....	59
2024թ-ին հանքի և ֆաբրիկայի ազատված տարածքներում բարեկարգման և կանաչապատման աշխատաքներ.....	59

Նախաբան

Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը հաստատելու մասին» N 191-Ն որոշման շրջանակներում, Սազամար ՓԲԸ-ն ներկայացնում է 2024 թվականին բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով իրականացված մշտադիտարկումների արդյունքները:

2024թ ընթացքում Սազամար ՓԲԸ-ն հանքաքարի արդյունահանում և վերամշակում չի իրականացրել:

Շրջակա միջավայրի նկատմամբ մշտադիտարկումները վերաբերում են Սազամար ՓԲԸ -ի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով, հիմնական գնահատման հաշվետվությամբ և բնապահպանական կառավարման պլաններով նշված բացասական ազդեցությունների տեսակներին:

Մշտադիտարկումների ծրագիրը կազմվել է ըստ շրջակա միջավայրի բոլոր բնական բաղադրիչների՝ հողային ծածկույթ, մթնոլորտային օդ, մակերևութային և ստորերկրյա ջրեր, բուսական ծածկույթ և կենդանական աշխարհ:

Աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունն իրականացվել է հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Շրջակա միջավայրի նկատմամբ մշտադիտարկումների տեսակների և ծավալների որոշմանը ցուցաբերվել է տարանջատված մոտեցում՝ ելնելով բացասական ազդեցությունների դրսևորման հավանականությունից, ծավալից, ազդեցության աստիճանից:

Ընկերության մշտադիտարկման պլանի կառուցվածքն ու բովանդակությունը կազմվել է համաձայն N 191 որոշման N 1 ձևով:

Սազամար ՓԲԸ Մշտադիտարկումների ամփոփ տարեկան 2024թ-ի հաշվետվություն

Նախագծային փաստաթղթերը և թույլտվությունները

- Արմանիսի ստորգետնյա հանքի եվ հարստացուցիչ ֆաբրիկայի աշխատանքային նախագծի ՇՄԱԳ հաշվետվություն և փորձաքննական եզրակացություն թիվ 130 տրված 27.10.2008թ
- Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայր ընդլայնման աշխատանքային նախագծի ՇՄԱԳ հաշվետվություն և փորձաքննական եզրակացություն թիվ 32, տրված 22.05.2015թ
- Աղտոտող նյութերի մթնոլորտ արտանետելու թույլտվություն թիվ 0089/21/ տրված 20,12,2021
- Զրոգտագործման թույլտվություն թիվ 202, ժամկետով 11.01.2022 -11.01.2025
- Թափոնի անձնագրեր, թվով 10 թափոնների համար
- Սագամար ՓԲԸ-ի ՀՀ Լոռու մարզի արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի արդյունահանման աշխատանքների բնապահպանական կառավարման պլան

Հանքավայրի շրջանի շրջակա միջավայրի նկարագիրը

Արմանիսի հանքավայրը տեղադրված է 1500-1900մ բարձրունքային նիշերի վրա: Նրա ռելիեֆը համեմատաբար հանգիստ է, համարյա միաթեք անկում է դեպի հյուսիս:

Լեռնագրական տեսակետից հանքավայրի գտնվում է Բազումի լեռնաշղթայի ստորոտում, որը պատկանում է Փոքր Կովկասի Վիրահայոց-Ղարաբաղի լեռնահամակարգի (միաթեք աստիճանաձև բեկորային զոնա) ներքին լեռնաշղթաների թվին և 66կմ երկարությամբ ձգվում է Սեպասարի սարավանդից մինչև Փամբակ գետի Գայլաձոր կիրճը: Լեռնաշղթան ունի 2800մ միջին և 2992մ (Ուրասար) առավելագույն բարձրություն:

Հանքավայրի շրջանը ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» N 102-Ն հրամանի՝ գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացումը կազմում է 0.4g, իսկ գրունտի հորիզոնական արագացման մեծությունը՝ 400սմ/վրկ²:

Լեռնահատկացման մակերեսը ըստ թիվ ԼՎ-093 լեռնահատկացման ակտի հատակագծի կազմում է 278.6հա:

Տարածքի բնակլիմայական պայմանների համաձայն «ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմերի:

Օդի ջերմաստիճան

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան °C	Բացարձակ նվազագույն °C	Բացարձակ առավելագույն °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Ստեփանավան	1397	-3,6	-2,8	0,6	6,7	11,3	14,2	17,1	16,8	13,3	8,2	3,1	-1,8	6,9	-31	37

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %															
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա %	ամենաշոգ ամսվա, %	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
Ստեփանավան	67	69	71	70	76	78	76	76	75	76	72	69	73	56	58	


Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	միջին ամսական													Ձնածածկույթ		
	Տեղումների քանակը _____, օրական առավելագույն մմ													Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Ստեփանավան	20	31	39	69	119	125	75	57	49	46	36	22	688	63	73	147
	36	54	29	36	103	55	53	51	41	36	32	35	103			

Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ Միջին արագությունը, ուղղությունների մ/վ								Անհողմոթյունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Հյուսիս - սային (Հս)	Հյուսիս-Արեւելյան (ՀսԱրլ)	Արեւելյան (Արլ)	Հարավ-Արեւելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արեւմտյան (ՀվԱրմ)	Արեւմտյան (Արմ)	Հյուսիս-Արեւմտյան (ՀսԱրմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Ստեփանավան	861,0	հունվար	2	3	8	7	7	37	30	6	49	2,8	1,8	21	27	30	32
			2,0	1,3	1,5	2,0	3,0	3,9	2,8	2,2							
		ապրիլ	2	3	11	10	6	25	34	9	45	2,0					
			2,2	1,4	1,6	1,9	2,2	3,1	2,6	2,2							
		հուլիս	2	3	13	10	4	19	39	10	61	1,1					
			1,5	1,1	1,4	1,4	1,4	1,6	1,8	1,5							
		Հոկտեմբեր	2	3	12	10	5	24	37	7	59	1,3					
			1,7	1,3	1,4	1,4	1,6	2,2	2,2	2,0							

Իրավիճակային սխեմա



Սազամար ՓԲԸ Մշտադիտարկումների ամփոփ տարեկան 2024թ-ի հաշվետվություն

Մթնոլորտային օդ

Հայաստանի Հանրապետության տարածքում, մթնոլորտային օդի միթորինգը իրականացնում է ՀՀ Շրջակա միջավարի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնը մթնոլորտային օդի որակի մոնիթորինգն իրականացնում է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ:

Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ համեմատությամբ:

Սակայն Ստեփանավան քաղաքում և Արմանիս բնակավայրում դիտակետեր կամ պասիվ նմուշառման կետեր չկան և այստեղ օդի փաստացի որակի մասին տեղեկություններ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով, համաձայն համապատասխան ձեռնարկ-նուլեցույցի, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Աղյուսակ 1.

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0.4	0.05	0.03	1.5
10 - 50	0.3	0.05	0.015	0.8
< 10	0.2	0.02	0.008	0.4

Ստեփանավան համայնքի բնակչությունը չի գերազանցում 20.0հազ.մարդ:
Հետևաբար, հանքավայրի և հարակից տարածքների համար որպես մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշ պետք է ընդունել.

փոշի 0.3մգ/մ³,

ծծմբի երկօքսիդ 0.05 մգ/մ³,

ազոտի երկօքսիդ 0.015մգ/մ³

ածխածնի օքսիդ 0.8մգ/մ³:

Սագամար ՓԲԸ-ում իրականացվել են մթնոլորտային օդում փոշու քանակությունների չափումներ՝ 3 կետում

Դիտակետ	Դիտակետի անվանում
1	Վարչական շենքի տարածք
2	Հարստացուցիչ ֆաբրիկայի հարակից տարածք
3	գ.Արմանիս




Չափման կետերի կլիմայական պայմանները և աշխատանքների նորմատիվ կանոնակարգերը բերված են աղյուսակում:

Դիտակետերի մասին տեղեկություն

Դիտակետի անվանում	Կլիմայական պայմաններ			Դիտակետի կորդինատներ	Նորմատիվ փասթաթղթեր
	Մթն.ճնշում ՀՊա	ՕՀԽ %	Օդի ջերմ. °C		
Վարչական շենքի տարածք	847,0	35,9	2,9	41,01932°C, 44.31306°B	ՀՀ կառավարության 02.02.2006թ N160-Ն որոշում, ԳՈՍՏ 17.2.4.05-83 N-541Ն 13.04.2023թ որոշում
Հարստացուցիչ ֆաբրիկա	848,4	31,2	4.0	41,01008°C, 44.32125°B	
գ. Արմանիս	848,8	31,2	4.5	41,00709°C, 44.33023°B	

Չափումներն իրականացվել են՝

- փոշու կոնցենտրացիան չափվել է Aerocet 831 գերճշգրիտ սարքի միջոցով,
- կլիմայական տվյալները չափվել են Kestrel 5500 սարքով,

		
Վարչական շենքի	Հարստացուցիչ ֆաբրիկա	գ. Արմանիս

Երեք դիտակետերում օդում փոշու պարունակության միանվագ առավելագույն պարունակությունները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Օդում ընդհանուր փոշու պարունակությունը

աղյուսակ 2

ՀՀ	Դիտակետի համարը	Անվանումը	Միանվագ առավելագույն պարունակությունը, մգ/մ ³	ՍԹԿ, մգ/նմ ³
1	Դիտակետ 1	Վարչական շենքի տարածք	0.110	1.5
2	Դիտակետ 2	Հարստացուցիչ ֆաբրիկայի հարակից տարածք	0.092	
3	Դիտակետ 3	գ.Արմանիս	0.095	0.5 ¹

¹ վերցված արտհրապարակի համար սահմանված ՍԹԿ (Сборник законодательных, нормативных и методических документов для экспертизы воздухоохраных мероприятий, Ленинград, ГИДРОМЕТЕОИЗДАТ, 1986г. стр. 99)

Ըստ փոշու պարունակության տվյալների, ցուցանիշները 3 անգամ ցածր են Ստեփանավանա համայնքի համար սահմանված ֆոնային կոնցենտրացիայից (փոշի **0.3մգ/մ³**):

Սագամար ՓԲԸ-ում իրականացվել են մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի քանակությունների չափումներ՝ 1 կետում, վարչական մասնաշենքին հարող տարածքում, տվյալները ներկայացված են աղյուսակ 3-ում: Դիտակետի կորդինատներ 41,004589° N, 44.184831° E

աղյուսակ 3

Միջին օրական կոնցենտրացիա, մգ/մ³	
Ծծմբի երկօքսիդ (ՍԹԿ _{միջ.օր} = 0.05 մգ/մ³)	Ազոտի երկօքսիդ (ՍԹԿ _{միջ.օր} = 0.04 մգ/մ³)
0.005	0.0011

Մակերևութային և ստորերկրյա ջրեր

Արմանիսի հանքավայրի շրջանի հիմնական ջրագրական միավորը Չքնաղ գետն է, Ձորագետի աջակողմյա վտակը, որը վերջինիս մեջ է թափվում գետաբերանից 26կմ վրա: Գետի երկարությունը 28կմ է, ջրհավաք ավազանի մակերեսը՝ 163կմ², ավազանի միջին բարձրությունը 1990մ, գետի միջին թեքությունը՝ 35‰: Գետը սկիզբ է առնում Բազումի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 2420մ: Հոսում է ընդհանուր հարավ արևելյան ուղղությամբ Լոռու դաշտով և Ստեփանավան քաղաքի մոտ միանում Ձորագետին:

Գետը դասվում է լեռնային գետերի շարքին: Գետը և վտակը ունեն խառը սնուցում, սնման հիմնական աղբյուրներն են հանդիսանում ստորերկրյա (45%), անձրևային (17%) և հալոցքային (38%) ջրերը: Տարվա ընթացքում գետային հոսքը բաշխվում է անհամաչափ: Հոսքի 57%-ն անցնում է ապրիլ-հունիս ամիսներին՝ գարնան հորդացման ժամանակ, որը

2024թ Ձորագետ գետի ջրի որակը ըստ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի թիվ 8 ջրի որակի մոնիթորինգի դիտակետի տվյալների³

Ստեփանավան քաղաքի մոտ;

Մարտին գնահատվել է 5-րդ դաս

Ապրիլին գնահատվել է 2-րդ դաս

Հունիսին գնահատվել է 3-րդ դաս

Հուլիսին գնահատվել է 3-րդ դաս

Օգոստոսին գնահատվել է 3-րդ դաս

Հոկտեմբերին գնահատվել է 5-րդ դաս

Գետաբերանին մոտ հատվածում, թիվ 12 ջրի որակի մոնիթորինգի դիտակետում

Մարտին գնահատվել է 3-րդ դաս

Ապրիլին գնահատվել է 3-րդ դաս

Հունիսին գնահատվել է 3-րդ դաս

Հուլիսին գնահատվել է 3-րդ դաս

Օգոստոսին գնահատվել է 2-րդ դաս

Հոկտեմբերին գնահատվել է 3-րդ դաս

«Սագամար» ՓԲ ընկերության կողմից 2023 թվականի ընթացքում կատարվել է Չքնաղ գետի ջրերի որակի մոնիթորինգ: Մոնիթորինգը իրականացվել է 1969-1988թթ.-ին Արմանիսի հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության նպատակով անցած №4 բովանգքից թափվող և Չքնաղ գետի ջրերի ջրերի որակի նկատմամբ ըստ այս սխեմատիկ գծապատկեր-նկարի (Սխեմա 2): Մոնիթորինգի արդյունքները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական և որակի մոնիթորինգ չի իրականացվում «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

³ <https://meteomonitoring.am/page/17>

Նմուշառման ստորագրություն	Փորձաքննության արդյունքները, (մգ/լիտր)									Կիրառված ստանդարտ մեթոդ
	Cu	Zn	Pb	Fe	As	Mo	Cl ⁻	SO ₄ ²⁻	pH	
Բովանգր №4 - ից դուրս թափվող ջրի ակունքից	1.584	53.98	0.0174	220.58	0.00347	0.0113	31.87	3238.91	3.4	ՀՍ ISO 17294-2, ՀՍ ISO 10304-1, ISO 10523
Բովանգր №4 - ից դուրս թափվող առվակի և Չքնաղ գետի հատման տեղից 100 մ ներքև, գետի հոսանքի ուղղությամբ, գետի ափից	0.000995	0.0129	<0.0001	0.327	0.000340	0.000889	1.164	13.61	8.20	

Հողային ծածկույթ

Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն:

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2023 թվականի 4-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն են իրականացվել Լոռու մարզում: Ուսումնասիրվել են ֆոնային տարածքներ: Լոռու մարզում ուսումնասիրված հողերում պարունակությունը գերազանցում է համապատասխանաբար

քրոմի ՍԹ-ն՝ 1.7-25.0 անգամ,

վանադիումի պարունակությունը՝ 1.1-2.0 անգամ,

նիկելի պարունակությունը՝ 6.0-24.5 անգամ,

պղնձի պարունակությունը՝ 58.7-102.7 անգամ,


ցինկի պարունակությունը՝ 2.5-13.6 անգամ,

արսենի պարունակությունը՝ 3.0-36.5 անգամ

մանգանի պարունակությունը՝ 1.1-2.5 անգամ

Կապարի պարունակությունը չի գերազանցել համապատասխան ՍԹ-ն:

Լոռու մարզի հողերի աղտոտվածության բաշխվածության քարտեզները ներկայացված են ստորև բերված Սխեմա 4:



Հանքավայրի տարածքում զարգացած են հիմնականում կրազերծված (Սխեմա 5) կարբոնատազուրկ սևահողեր: Ստորև բերված են կրազերծված սևահողերի քիմիական և ֆիզիկաքիմիական հատկությունները:

Հորիզոնների խորությունը, սմ	Պարունակությունները			Կլանված հիմքերի գումարը, մ/էկվ 100գ հողում
	հումուսը,%	ընդհանուր		
		ազոտ	CaCO ₃	
0-23	6.67	0.34	չկա	32.2
23-43	6.59	0.32	չկա	33.4
43-68	5.32	0.31	չկա	37.3
68-83	1.64	0.20	չկա	28.5
83-100	0.90	0.19	40.3	չի որոշված

Սխեմա 5



Մոիտորինգի արդյուքները երկայացված են աղյուսակ 5-ում: Նմուշառումը իրականացվել է 4 կետերում:

1 կետ, Բովանցք №4 մոտ	41;1;0.91 44;18;28.13
2 կետ, Արմանիս-Ուրասար ճանապարհից աջ	41;0;55.26 44;18;24.01
3 կետ, Ֆաբրիկայի հարող տարածք	41;0;36.119 44;19;16.72
4 կետ, գ. Արմանիս	41;0;25.519 44;19;49.16

Հանքավայրի տարածքի հողերում դիտվում է պղնձի, ցինկի և արսենի ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 25-ի «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 01 հրամանով հաստատված ՍԹԿ գերազանցող պարունակություններ. Cu, Zn, As, Ni: Նշված գերազանցումները պայմանավորված են հողագոյացնող մայրական ապարներում սուլֆիդային-բազմամետաղային հանքայնացման տարածմամբ:

աղյուսակ 5

h.h.	Չափված ցուցանիշ	Չափման միավոր	Չափված արժեք				ՍԹԿ-ի մեծությունը մգ/կգ հաշվի առնելով ֆոնը
			1	2	3	4	
1	Ալյումին	մգ/կգ	40587	53156	36385	38442	
2	Սիլիցիում	մգ/կգ	108024	103464	126701	107942	
3	Ֆոսֆոր	մգ/կգ	1287	1157	1053	<50	10
4	Ծծումբ	մգ/կգ	4185	5520	4326	4209	160
5	Քլոր	մգ/կգ	<50	<50	<50	<50	
6	Կալիում	մգ/կգ	9015	12894	8247	8435	560
7	Կալցիում	մգ/կգ	12280	7732	7419	8706	
8	Տիտան	մգ/կգ	3030	3283	4538	3871	
9	Վանադիում	մգ/կգ	194	314	253	197	150
10	Քրոմ	մգ/կգ	60	38	348	74	6
11	Մանգան	մգ/կգ	1437	1141	931	444	1500
12	Երկաթ	մգ/կգ	37562	51707	43074	40741	
13	Կոբալտ	մգ/կգ	<5	<5	<5	<5	5
14	Նիկել	մգ/կգ	66	43	206	68	4

15	Պղինձ	մգ/կգ	68	119	74	66	3
16	Ցինկ	մգ/կգ	678	452	142	93	23
17	Արսեն	մգ/կգ	11	9	13	7	2
18	Սելեն	մգ/կգ	<5	<5	<5	<5	
19	Ռուբիդիում	մգ/կգ	40	69	52	48	
20	Ստրոնցիում	մգ/կգ	197	117	183	183	
21	Իտրիում	մգ/կգ	22	26	28	26	
22	Ցիրկոնիում	մգ/կգ	117	56	133	118	
23	Նիոբիում	մգ/կգ	<5	<5	11	<5	
24	Մոլիբդեն	մգ/կգ	48	53	48	48	
25	Արծաթ	մգ/կգ	<5	7	8	<5	
26	Կադմիում	մգ/կգ	<5	<5	<5	<5	
27	Անագ	մգ/կգ	<5	<5	<5	<5	
28	Ծարիր	մգ/կգ	<5	<5	<5	<5	4,5
29	Վոլֆրամ	մգ/կգ	<5	<5	<5	<5	
30	Սնդիկ	մգ/կգ	<5	<5	<5	<5	2.1
31	Կապար	մգ/կգ	29	80	38	21	32
32	Բիսմութ	մգ/կգ	7	6	6	6	
33	Թորիում	մգ/կգ	<5	<5	<5	<5	

Վայրի բնություն, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ

Ֆլորա


2023 թվականին բուսաբանական ուսումնասիրություններ են կատարվել Լոռու մարզի Արմանիս համայնքի շրջակայքում շահագործման համար նախատեսվող բազմամետաղային հանքավայրի տարածքում և դրա շրջակայքում (նկար 1-8):

Աշխատանքի արդյունքում վերլուծվել է տարածքի ֆլորան և բուսականությունը, համակարգչային Excel ծրագրով ստեղծվել է բուսատեսակների տվյալների բազա, որում ընդգրկվել են բույսերի տեսակային կազմը, տեսակների էկոլոգիական բնութագրերը, կենսաձևերը, «Կարմիր գրքում» ընդգրկվածությունը, էնդեմիկների առկայությունը կամ բացակայությունը (Հայաստանի բույսերի Կարմիր գիրք, 2010; Фафьева, 2007):

Տվյալների վերլուծության ժամանակ օգտագործվել են Ա.Ի. Տոլմաչովի (1970) և Լ.Ի. Մալիշևի (1987) կողմից առաջադրված ֆլորայի քանակական վերլուծության մեթոդները: Տեսակների վերաբերյալ տվյալների աղբյուր են հանդիսացել Հայաստանի ֆլորայի 11 հատորները (Флора Армении, 1954-2009), դրանց գիտական անվանումները ճշտվել են ըստ Ս. Չերեպանովի մեթոդական ձեռնարկի (Черепанов, 1995):

Տարածքը ուսումնասիրվել է մարշրուտային մեթոդով, կատարվել են բուսականության նկարագրություն և բուսատեսակների հերբարիումային հավաքներ, Ֆոտոլուսանկարներ, լաբորատոր պայմաններում ֆլորայի կազմը բացահայտելու նպատակով:

Բաժնում ընդգրկված բոլոր նկարները օրիգինալ են նկար 1-27:



Նկար 1. Ուսումնասիրվող տարածքը Արմանիս համայնքի հարևանությամբ



Նկար 2. Ուսումնասիրվող տարածքը (տեսքը հյուսիսից)

Ուսումնասիրված տարածքը գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Ուրասար և Արմանիս գյուղերի միջև, Ուրասար լեռից արևելք-հյուսիս-արևելք ուղղությամբ, Կաթնաղբյուր գետի հովտի աջափնյա

հատվածում, ծովի մակարդակից մոտ 1500-1600 մ բարձրությունների վրա (Նկար 1-2): Հանքի տարածքը բուսաշխարհագրական տեսակետից պատկանում է Հայաստանի Հանրապետության Լոռու ֆլորիստիկ շրջանին (Թախտաջյան, 1978): Ուսումնասիրվող հատվածների բուսականությունը ունի արտահայտված քսերոֆիլ, քսերո-մեզոֆիլ և մեզոֆիլ բնույթ, բուսականության հիմնական տիպը մարգագետնատափաստանային և լեռնատափաստանային է, Կաթնաղբյուր գետի հովտում բավականին զարգացած է ծառաթփային բուսականությունը, տարածքից ոչ հեռու՝ գետի ձախափնյա մասում գտնվում է Շուշանալիճը, խոնավասեր և ջրային մի շարք բուսատեսակների բուսուտներով (Նկար 3, 7): Հանքի տարածքում և շրջապատում բավականին զարգացած է մոլախոտային բուսականությունը, առկա են բույսերով չծածկված հատվածներ (Նկար 6), մեծամասնություն են կազմում բազմամյա և միամյա խոտատեսակներով ծածկված մակերեսները: Ուսումնասիրվող տարածքում ծառաթփատեսակները հիմնականում հանդիպում են գետահովտում, որտեղ առկա է խոնավության բավարար պաշար դրանց գոյության համար: Այստեղ հանդիպում են Արևելյան կաղնու, Սովորական բոխու, Բարձրլեռնային թխկու, Կովկասյան տանձենու և այլ ծառատեսակներ, Մասրենու, Կծոխուրի, Ցախակեռասի, Գերիմաստու, Ասպիրակի, Դժնիկի և այլ թփատեսակներ, գետի ափերի երկայնքով հանդիպում են Ուռենու մի շարք տեսակներ:



Նկար 3. Ուսումնասիրվող տարածքի ջրային բուսականությունը՝ Շուշանալիճ



Նկար 4. Ուտումնասիրվող տարածքի տափաստանային բուսականությունը



Նկար 5. Ուտումնասիրվող տարածքի մարգագետնատափաստանային բուսականությունը



Նկար 6. Հետազոտվող տարածքի մոլախոտային և խախտված էկոհամակարգով բուսականության հատվածներ



Նկար 7. Ուսումնասիրվող տարածքի ջրաճահճային բուսականությունը Լայնատերև կեռոնի (*Typha latifolia*) բուսուտներով



Նկար 8. Հետազոտվող տարածքի ծառաթփային բուսականությունը Արևելյան կաղնու (*Quercus macranthera*) գերակշռությամբ

Հանքի համար նախատեսված տարածքից 2023 թ-ին որոշվել են 164 տեսակի բարձրակարգ բույսեր, որոնք պատկանում են 140 ցեղի, 58 ընտանիքի, 3 բաժնի, 4 դասի (Մերկասերմեր, Ծածկասերմեր՝ Միաշաքիլավորներ, Երկշաքիլավորներ):

Plantae - ԲՈՒՅՍԵՐ

HIGER PLANTS

EQUISETOPHYTA - ՁԻԱՁԵՏԵՐ

Equisetaceae - Ձիաձետազգիներ

Equisetum palustre L.- Ձիաձետ ճահճային

PTEROPHYTA - ՊՏԵՐՆԵՐ

Dryopteridaceae - Վահանապտեռազգիներ

Dryopteris filix-mas (L.) Shott. - Վահանապտեր արական

Polypodiaceae - Բազմոտիկազգիներ

Polypodium vulgare L. - Բասբայջ սովորական

ANGIOSPERMAE - ԾԱԾԿԱՍԵՐՄԵՐ

Aceraceae - Թխկազգիներ

Acer campestre L. - Թխկի դաշտային

Acer trautvetteri Medw. - Թխկի բարձրլեռնային

Alismataceae - Հովվափողազգիներ

Alisma plantago-aquatica L. - Հովվափող սովորական

Alliaceae - Սոխազգիներ

Allium atrovioleaceum Boiss. - Սոխ մուգ մանուշակագույն

Allium aucheri Boiss. - Սոխ Օշեի

Amaranthaceae - Հավակատարազգիներ

Amaranthus retroflexus L. - Հավակատար սովորական

Apiaceae - Հովանոցազգիներ

Astrodaucus orientalis (L.) Drude - Աստղագազար արևելյան

Chaerophyllum aureum L. - Շուշանբանջար ոսկեզոծ

Daucus carota L. - Գազար վայրի

Eryngium campestre L. - Երնջնակ դաշտային

Falcaria vulgaris Bernh. - Սիբեխ սովորական

Heracleum transcaucasicum Manden. - Բալդրիդան

անդրկովկասյան

Prangos ferulacea (L.) Lindl. - Պրանգոս նարդեսանման

Asclepiadaceae - Թունաթափազգիներ

Vincetoxicum amplifolium K. Koch - Թունաթափ լայնատերև

Asparagaceae - Ծնեփակազգիներ

Asparagus verticillatus L. - Ձներեկ, Ծնեփակ օղակավոր

Asteraceae - Բարդաձաղկավորներ

Achillea millefolium L. - Հազարատերևուկ սովորական

Artemisia absinthium L. - Օշինդր դառը

Bidens tripartita L. - Կատվալեզու եռաբաժան

Carduus hamulosus Ehrh. - Տատասկափուշ կեռանման
Centaurea depressa Bieb. - Տերեփուկ սեղմված
Centaurea diffusa Lam. - Տերեփուկ փռված
Cichorium intybus L. - Եղերդակ, ճարճատուկ սովորական
Echinops pungens Trautv. - Թոփփուշ, Ոզնագլխիկ փշոտ
Lactuca serriola L. - Մառոլ, Հազար, Կաթնուկ կողմնացույց
Onopordum acanthium L. - Կառ փշոտ
Taraxacum officinale Wigg. - Խատուտիկ դեղատու
Xanthium italicum Moretti - Դառնափուշ, Դառնուկ իտալական
Xanthium spinosum L. - Դառնափուշ, Դառնուկ ասեղնավոր
Xeranthemum longipapposum Fisch. et C. A. Mey. - Չորաբույս
Xeranthemum squarrosum Boiss. - Անմեռուկ չոլած

Berberidaceae - Կծոխուրազգիներ

Berberis vulgaris L. - Կծոխուր սովորական

Betulaceae - Կեչազգիներ

Carpinus betulus L. - Բոխի սովորական

Boraginaceae - Գաղտրիկազգիներ

Cerinthe minor L. - Մոմախոտ փոքր
Echium vulgare L. - Իժախոտ սովորական
Onosma isaurica Boiss. et Heldr. - Իշիոտոտ իսաուրական
Symphytum asperum Lepech. - Քարխոտ կոշտ

Brassicaceae - Խաչածաղկավորներ

Alyssum desertorum Stapf. - Վառվոուկ անապատային
Capsella bursa-pastoris (L.) Medik. - Ծտապաշար, Հովվամաղախ
Crambe orientalis L. - Ծովակաղամբ արևելյան
Hesperis matronalis L. - Գիշերային մանուշակ
Lepidum latifolium L. - Նվարդակ լայնատերև
Thlaspi perfoliatum L. - Շնկոտեն թափանցված

Campanulaceae - Զանգակազգիներ

Campanula glomerata L. - Զանգակ խմբված

Caprifoliaceae - Ցախակեռասազգիներ

Lonicera caucasica Pall. - Ցախակեռաս կովկասյան
Sambucus nigra L. - Կտուկենի սև
Viburnum lantana L. - Գերիմաստի

Caryophyllaceae - Մեխակազգիներ

Cerastium arvense L. - Ճոճոուկ մարգագետնային
Dianthus orientalis Adams - Մեխակ արևելյան
Silene iberica Bieb. - Ծվծվուկ վրացական

Chenopodiaceae - Թելուկազգիներ

Atriplex tatarica L. - Թալ թաթարական

Chenopodium album L. - Թելուկ սպիտակ /կամ սովորական/

Chenopodium botrys L. - Թելուկ հոտավետ

Chenopodium foliosum Aschers. - Թելուկ բազմատերև

Convolvulaceae - Պատատուկազգիներ

Convolvulus arvensis L. - Պատատուկ դաշտային

Cornaceae - Հոնազգիներ

Swida australis (C.A. Mey.) Pojark. ex Grossh. - Ճապկի հարավի

Crassulaceae - Թանձրատերևազգիներ

Sedum caucasicum (Grossh.) A. Bor. - Թանթոնիկ կովկասյան

Sedum oppositifolium Sims. - Թանթոնիկ հակադրատերև

Cuscutaceae - Գաղձազգիներ

Cuscuta cesattiana Bertol. - Գայլխոտ, Գաղձ Ցեզատի

Cyperaceae - Բոշխազգիներ

Carex acuta L. - Բոշխ սուր

Carex hirta L. - Բոշխ կարճամազ

Schoenoplectus tabernaemontani (C. C. Gmel.) Palla - Ճլախոտ

Dipsacaceae - Ակքանազգիներ

Cephalaria gigantea (Ledeb.) Bobr. - Զիվան հսկայական

Scabiosa caucasica Bieb. - Քոսքունիկ կովկասյան

Euphorbiaceae - Իշակաթնուկազգիներ

Euphorbia helioscopia L. - Իշակաթնուկ արևատես

Euphorbia iberica Boiss. - Իշակաթնուկ վրացական /իբերիական/

Fabaceae - Լոբազգիներ

Astracantha microcephalus Willd. - Գազ մանրագլխիկ

Lotus caucasicus Kuprian. ex Juz. - Եղջերառվույտ կովկասյան

Medicago coerulea Less. ex Ledeb. - Առվույտ երկնագույն

Medicago lupulina L. - Առվույտ գայլուկանման

Melilotus officinalis (L.) Pall. - Իշառվույտ դեղատու

Trifolium arvense L. - Երեքնուկ վարելահողային

Vicia grandiflora Scop. - Գյուլուկ, Վիկ խոշորածաղիկ

Vicia sativa L. - Գյուլուկ, Վիկ ցանովի

Fagaceae - Հաճարազգիներ

Quercus macranthera F. et M. ex Hohen. - Կաղնի արևելյան

Fumariaceae - Ծխաբույսազգիներ

Fumaria officinalis L. - Ծխաբույս, Տերուկ դեղատու

Geraniaceae - Խորդենազգիներ

Erodium cicutarium (L.) L'Her. - Ճայկտուց խնդամուկային

Hyacinthaceae - Հակինթազգիներ

Muscari caucasicum (Griseb.) Baker - Պապլոր կովկասյան

Puschkinia scilloides Adam - Պուշկինիա մկնաստիսանման

Scilla armena Grossh. - Մկնաստիս հայկական

Hypericaceae - Սրճիկազգիներ

Hypericum perforatum L. - Սրճիկազգի խոցված

Iridaceae - Հիրիկազգիներ

Gladiolus caucasicus Herb. - Թրաշուշան կովկասյան

Iris furcata M. Bieb. - Հիրիկ եղանավոր

Juncaceae - Կնյունազգիներ

Juncus effusus L. - Կնյուն բաժանված

Lamiaceae - Շրթնածաղկավորներ

Ajuga chia Schreb. - Ճանկխոտ հիոսական

Lamium album L. - Խուլ եղինջ սպիտակ

Lycopus europaeus L. - Ճահճաեղինջ եվրոպական

Mentha longifolia (L.) Huds. - Անանուխ, Դաղձ երկարատերև

Nepeta mussinii Spreng. - Կատվադաղձ Մուսինի

Nepeta ucranica L. - Կատվադաղձ ուկրաինական

Salvia glutinosa L. - Եղեսպակ կաշուն

Scutellaria orientalis L. - Սաղավարտուկ արևելյան

Teucrium polium L. - Լերդախոտ ալեհեր

Thymus kotschyanus Boiss. et Hohen. - Ուրց Կոչիի

Lemnaceae - Ջրոսպազգիներ

Lemna minor L. - Ջրոսպ փոքր

Liliaceae - Շուշանազգիներ

Gagea gageoides (Zucc.) Vved. - Սագաստխուկ

Linaceae - Վուշազգիներ

Linum nervosum Waldst. et Kit. - Վուշ ջղավոր

Malvaceae - Փիփերթազգիներ

Alcea rugosa Alef. - Տուղտավարդ կնճոռոտ

Malva neglecta Wallr. - Մոլոշ, Փիփերթ արհամարհված

Malva sylvestris L. - Փիփերթ անտառային

Oleaceae - Զիթենազգիներ

Fraxinus excelsior L. - Հացենի սովորական

Onagraceae - Ապուզանազգիներ

Epilobium hirsutum L. - Ապուզան թավոտ

Papaveraceae - Կակաչազգիներ

Glaucium corniculatum (L.) J. Rudolph - Թխակակաչ եղջերավոր

Papaver commutatum Fisch. et C.A. Mey. - Կակաչ խճճված

Papaver bracteatum Lindl. - Կակաչ բաժակակիցային

Plantaginaceae - Զղախոտազգիներ

Plantago lanceolata L. - Զղախոտ, Եզան լեզու նշտարատերև

Plantago major L. - Զղախոտ, Եզան լեզու մեծ

Poaceae - Հացազգիներ

Aegilops cylindrica Host - Այծակն գլանաձև
Avena fatua L. - Խրբուկ, Վարսակ դատարկ, Վ. պոչուկ
Briza elatior L. - Դողդողուն բարձր
Bromus japonicus Thunb. subsp. *japonicus* - Յորնուկ ճապոնական
Cynodon dactylon (L.) Pers. - Արվանտակ մատնաձև
Dactylis glomerata L. - Ոգնախոտ հավաքված
Elytrigia repens (L.) Nevski - Չաիր, Սեզ սողացող
Festuca woronowii Hack. - Շյուղախոտ Վորոնովի
Hordeum bulbosum L. - Գարի սոխուկավոր
Hordeum murinum L. - Գարի մկնային, Մկնագարի
Lolium perenne L. - Որոմ բազմամյա, Անգլիական ռայգրաս
Phleum pratense L. - Սիզախոտ մարգագետնային
Phragmites australis (Cav.) Trin. ex Steud. - Եղեգ հարավային
Poa bulbosa L. - Դաշտավուկ սոխուկավոր
Poa nemoralis L. - Դաշտավուկ կաղնուտային
Setaria viridis (L.) P. Beauv. - Խոզանուկ կանաչ
Stipa arabica Trin. et Rupr. - Սմբուկ, Փետրախոտ արաբական

Polygonaceae - Մատիտեղազգիներ

Polygonum aviculare L. - Մատիտեղ ճնճուկի
Polygonum convolvulus L. - Մատիտեղ փաթաթվող
Rumex acetosa L. - Ավելուկ սովորական
Rumex crispus L. - Ավելուկ գանգուր

Primulaceae - Գնարբուկազգիներ

Primula macracalyx Bunge - Գնարբուկ խոշորաբաժակ

Ranunculaceae - Գորտնուկազգիներ

Adonis aestivalis L. - Կուժկոտրուկ ամառային
Delphinium orientale J. Gay - Ոջլախոտ արևելյան
Ranunculus elegans K. Koch - Գորտնուկ նրբագեղ

Resedaceae - Հափուկազգիներ

Reseda lutea L. - Հափուկ դեղին

Rhamnaceae - Դժնիկազգիներ

Rhamnus cathartica L. - Դժնիկ լուծողական

Rosaceae - Վարդազգիներ

Agrimonia eupatoria L. - Երեսնակ սովորական
Aruncus vulgaris Raf. - Այծմորուք սովորական
Cerasus avium (L.) Moench - Կեռասենի անտառային
Crataegus orientalis Pall. ex Bieb. - Ալոճ, Սզնի արևելյան
Filipendula ulmaria (L.) Maxim. - Փրփրուկ թեղանման

Geum urbanum L. - Շահոքրամ սովորական
 Padus racemosa (Lam.) Gilib. - Թխենի սովորական
 Potentilla recta L. - Մատնունի բարձր
 Poterium polygamum Waldest. et Kit. - Սևագլխիկ բազմակող
 Prunus divaricata Ldb. - Սալոր, Շլոր
 Pyrus caucasica Fed. - Տանձենի կովկասյան
 Rosa canina L. - Մասրենի շան
 Rosa iberica Stev. ex Bieb. - Մասրենի վրացական
 Rosa spinosissima L. - Մասրենի առատափուշ
 Rubus idaeus L. - Մորենի, Ազնվամորի
 Sorbus aucuparia L. - Ծոփխնձոր, Արոսի սովորական
 Spiraea hypericifolia L. - Ասպիրակ արևքուրիկատերև

Rubiaceae - Տորոնազգիներ

Galium aparine L. - Մակարդախոտ կաչուն

Salicaceae - Ուռենազգիներ

Salix caprea L. - Այծուռենի, Ործուռի
 Salix excelsa S. G. Gmel. - Ուռենի բարձր
 Salix triandra L. - Ուռենի եռառէջ

Scrophulariaceae - Խլածաղկազգիներ

Rhinanthus minor L. - Աքլորաբբուկ փոքր
 Veronica anagallis-aquatica L. - Բերենիկե աղբյուրային

Solanaceae - Մորմազգիներ

Hyoscyamus niger L. - Բանգի սև

Typhaceae - Կեռոնազգիներ

Typha latifolia L. - Որձախոտ, Կեռոն լայնատերև

Ulmaceae - Թեղազգիներ

Ulmus minor Mill. - Թեղի փոքր

Urticaceae - Եղինջազգիներ

Urtica dioica L. - Եղինջ երկտուն

Violaceae - Մանուշակազգիներ

Viola odorata L. - Մանուշակ բուրավետ

Խոշոր կարգաբանական միավորների վերլուծությունից ակնհայտ է, որ ֆլորայում գերակշռում են երկշաքիլավորների դասի ներկայացուցիչները՝ 128 տեսակ: Միաշաքիլավորները ներկայացված են 33 տեսակով, Պտերայինները՝ երկու, Ձիաձետայինները՝ մեկ տեսակով:

Արմանիս համայնքի հանքավայրի և շրջակա տարածքի ֆլորայի կարգաբանական միավորները

Խոշոր կարգաբանական միավորները	Ընտանիք		
-------------------------------	---------	--	--

Թագավորություն	Բաժին	Դաս	ների քանակը	Ցեղերի քանակը	Տեսակների քանակը
Բույսեր	Ձիաձեռներ	Ձիաձեռայիններ	1	1	1
	Պտերներ	Պտերայիններ	2	2	2
	Ծածկասերմեր	Երկշաքիլավորներ	44	108	128
		Միաշաքիլավորներ	11	29	33
Ընդամենը			58	140	164

Ֆլորայի ընտանիքների դասավորվածությունը, իր ընդհանուր գծերով, բնորոշ է Կովկասյան գավառի ֆլորային, որտեղ տեսակային բազմազանության առումով առաջատար դիրք են գրավում Վարդազգիների, Հացազգիների, Բարդաձաղկավորների, Լոբազգիների, Շրթնաձաղկավորների Հովանոցազգիների, Խաչաձաղկավորների, Գաղտրիկազգիների և այլ ընտանիքները: Ցեղային առումով ևս բազմազանությունը նկատվում է վերոնշված ընտանիքներում:

Արմանիս համայնքի հանքավայրի և շրջակա տարածքի ֆլորայի ընտանիքների և ցեղերի սպեկտրը

h/h	Ընտանիքներ	Տեսակների քանակը	Ցեղերի քանակը
1	Հացազգիներ – Poaceae	17	15
2	Վարդազգիներ - Rosaceae	17	15
3	Բարդաձաղկավորներ - Asteraceae	15	12
4	Շրթնաձաղկավորներ - Lamiaceae	10	9
5	Լոբազգիներ – Fabaceae	8	6
6	Հովանոցազգիներ - Apiaceae	7	7
7	Խաչաձաղկավորներ - Brassicaceae	6	6
8	Գաղտրիկազգիներ - Boraginaceae	4	4
9	Թելուկազգիներ - Chenopodiaceae	4	2
10	Մատիտեղազգիներ - Polygonaceae	4	2
11	Հակինթազգիներ - Hyacinthaceae	3	3
12	Մեխակազգիներ - Caryophyllaceae	3	3
13	Ցախակեռասազգիներ - Caprifoliaceae	3	3
14	Գորտնուկազգիներ - Ranunculaceae	3	3

15	Փիփերթազգիներ - Malvaceae	3	2
----	---------------------------	---	---

Ֆլորայի կենսաբանական սպեկտրը

Արմանիս համայնքի շրջակայքի ուսումնասիրվող հատվածի ֆլորայում բույսերի տարբեր կենսաձևերը ներկայացված են հետևյալ հարաբերակցությամբ՝

Ծառեր – 16 տեսակ,
Թփեր և կիսաթփեր - 13 տեսակ,
Բազմամյա խոտաբույսեր – 84 տեսակ,
Երկամյաններ – 9 տեսակ,
Միամյա-երկամյաններ – 8 տեսակ,
Միամյաններ – 34 տեսակ:

Տարածքում գերակշռում են բազմամյա խոտաբույսերը, երկրորդ տեղը գրավում են միամյանները: Չնայած բազմամյանների գերակշռմանը, միամյանները ևս մեծ տոկոս են կազմում, որը վկայում է բուսականության համար անբարենպաստ պայմանների մասին՝ չոր կլիմա, ցուրտ ձմեռ, գերարածեցում, հանքարդյունաբերություն:

Բավականին մեծ թիվ են կազմում նաև ծառաթփային տեսակները, որոնք հիմնականում կենտրոնացած են գետահովիտներում):

Բուսատեսակների էկոլոգիական առանձնահատկությունները

Հետազոտվող տարածքում հանդիպող բուսատեսակների մեծ մասը հանդիսանում են քսերո-մեզոֆիտները կամ չորա-խոնավասերները, մեզոֆիտները կամ խոնավասերները, այնուհետև տեսակային քանակով որոշակի քանակ են կազմում հիդրոֆիտները կամ ջրասերները:

Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակները և ֆլորայի էնդեմիզմը

Արմանիս համայնքի շրջակայքի հանքավայրի համար նախատեսված տարածքում Հայաստանի Հանրապետության Բույսերի Կարմիր գրքում գրանցված անհետացող, հազվագյուտ կամ վտանգի տակ գտնվող տեսակներ չեն հայտնաբերվել (Հայաստանի բույսերի Կարմիր գիրք, 2010): Հայաստանի կամ այլ կարգավիճակի էնդեմներ ուսումնասիրվող տարածքում չկան (Փայօսյան, 2007): Նշված տարածքում բացակայում են նաև հազվագյուտ էկոհամակարգերը:

Տեսակների տնտեսական նշանակությունը

Ուսումնասիրված տարածքը աղքատ է օգտակար բուսատեսակներով, սակայն դրանցից մի շարք տեսակներ հանդիսանում են ուտելի, համեմունքային, մեղրատու, դեղատու, կերային, տեխնիկական և գեղազարդային նշանակության բույսեր (Ղանդիլյան, Բարսեղյան, 1999; Мирзоева, Ахвердов, 1959) (Նկար 9-27):

Բույսերի ուտելի և համեմունքային տեսակներին են պատկանում՝ Հավակատար սովորական (*Amaranthus retroflexus*), Թելուկ սպիտակ (*Chenopodium album*), Սիբեյս

սովորական (*Falcaria vulgaris*), Աստղազազար արևելյան (*Astrodaucus orientalis*), Մասրենի վրացական (*Rosa iberica*), Մասրենի առատափուշ (*Rosa spinosissima*) Կծոխուր սովորական (*Berberis vulgaris*), Փիփերթ արհամարհված (*Malva neglecta*) և այլ տեսակներ:

Տարածքում հանդիպում են արժեքավոր դեղատու (*Nepeta mussinii* - Կատվադաղձ Մուսինի, *Achillea millefolium* - Հազարատերև սովորական, *Artemisia absinthium* - Օշինդր դառը, *Cichorium intybus* - Ճարճատուկ սովորական, *Teucrium polium* - Լերդախոտ ալեհեր, *Plantago lanceolata* - Եզան լեզու նշտարատերև և այլն) բուսատեսակներ, կուլտուրական բույսերի վայրի ազգակիցներ (*Allium aucheri* - Սոխ Օշեի, *Hordeum murinum* – Գարի մկնային, *Avena fatua* - Վարսակ դատարկ և այլն):

Տարածքում ներկայացված են քիչ քանակով գեղազարդային բույսեր (*Allium atrovioleaceum* - Սոխ մուգ մանուշակագույն, *Xeranthemum squarrosum* – Չորաբույս, *Dianthus orientalis* - Մեխակ արևելյան և այլն), կերային (*Festuca woronowii* - Շյուդախոտ Վորոնովի, *Phleum pratense* - Սիզախոտ մարգագետնային, *Poa bulbosa* - Դաշտավլուկ սոխուկավոր և այլն) և տեխնիկական բույսեր (*Quercus macranthera* - Կաղնի արևելյան, *Malva neglecta* - Փիփերթ արհամարհված, *Salix caprea* - Այծուռենի և այլն):

